# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

03 դեկտեմբերի 2025 թվականի N 134-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 171-Ն որոշման 1-ին կետով հաստատված կանոնակարգի 48-րդ, 49-րդ կետերով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողի 2025թվականի հոկտեմբերի 28-ի N 16 արձանագրությունը, Գյումրի համայնքի ավագանու «Հայաստանի կոմունիստական կուսակցություն» խմբակցության ղեկավարի գրավոր առաջարկությունը (համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի նոյեմբերի 27-ին Զ/2241 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի նախագահի՝ «Հայաստանի կոմունիստական կուսակցություն» խմբակցության քարտուղար Լուսինե Անանյանի թեկնածությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լուսինե Անանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

| Կողմ -17 | Դեմ -11 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|
| Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ | Վ. ՄԿՐՏՉՅԱՆ | |
| Լ. ԱՆԱՆՅԱՆ | Լ. ԱՆԱՆՅԱՆ | |
| Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | |
| Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ | Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ | |
| Ս. ԷԼԲԱԿՅԱՆ | Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | |
| Ս. ՄԵԼԻՔՅԱՆ | Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ | |
| Ս. ԱԴԱՄՅԱՆ | Ա. ՀԱԿՈԲՅԱՆ | |
| Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ | Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ | |
| Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ | Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ | |
| Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ | Վ. ԴԱՎԹՅԱՆ | |
| Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ | Լ. ՆԱԶԱՐՅԱՆ | |
| Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ | | |
| Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ | | |

Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 03
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

03 դեկտեմբերի 2025 թվականի N 135-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ 21 ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1–ին մասի 4-րդ և 25-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականին նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով հաստատված կարգերի դրույթներով և հաշվի առնելով հանրային բաց լսման և քննարկման արդյունքները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է՝**

1.Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրի համայնքի երկրորդային 21 փողոցների հիմնանորոգում» (այսուհետ՝ ծրագիր) սուբվենցիոն հայտին՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ

1) ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 2 452 947 000 (երկու միլիարդ չորս հարյուր հիսուներկու միլիոն ինը հարյուր քառասունյոթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ (100%), որից՝ 1 471 768 200 (մեկ միլիարդ չորս հարյուր յոթանասունմեկ միլիոն յոթ հարյուր վաթսունութ հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ(60%) համաֆինանսավորման տեսքով ներդնում է համայնքը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 6/6/1 գործառնական դասակարգման (5113) «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» և «Նախագծահետազոտական ծախսեր» (5134) տնտեսագիտական դասակարգման հոդվածներից,

2) ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդ օրվանից:

**Կողմ -27** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱՁԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 03
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 դեկտեմբերի 2025 թվականի N 136-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ (2 ՓՈՒԼՈՎ)» ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1–ին մասի 4-րդ և 25-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականին նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով հաստատված կարգերի դրույթներով և հաշվի առնելով հանրային բաց լսման և քննարկման արդյունքները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրի համայնքի կարիքների համար սոցիալական բազմաբնակարան շենքի կառուցում (2 փուլով)» (այսուհետ՝ ծրագիր) սուբվենցիոն հայտին՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ

1) ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 1 800 000 000 (մեկ միլիարդ ութ հարյուր միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ(100%), որից՝ 1 080 000 000 (մեկ միլիարդ ութսուն միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ(60%) համաֆինանսավորման տեսքով ներդնում է համայնքը, ընդ որում.

ա. 390.000.000 (երեք հարյուր իննսուն միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ 2026 թվականին,

բ. 690.000.000 (վեց հարյուր իննսուն միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ 2027 թվականին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 6/6/1 գործառնական դասակարգման (5112) «Շենքերի և շինությունների կառուցում» և «Նախագծահետազոտական ծախսեր» (5134) տնտեսագիտական դասակարգման հոդվածներից,

2) ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդ օրվանից:

**Կողմ -27** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳՋԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 03
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 դեկտեմբերի 2025 թվականի N 137-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՑԻ ՓՈՂՈՑ N 162 ՀԱՍՑԵԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՇԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԵՎ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1–ին մասի 4-րդ և 25-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականին նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով հաստատված կարգերի դրույթներով և հաշվի առնելով հանրային բաց լսման և քննարկման արդյունքները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրի համայնքի Շիրակացի փողոց N 162 հասցեի պատմամշակութային շենքի վերականգնում և հիմնանորոգում» (այսուհետ՝ ծրագիր) սուբվենցիոն հայտին՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ

1) ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 400 000 000 (չորս հարյուր միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ(100%), որից՝ 240 000 000 (երկու հարյուր քառասուն միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ(60%) համաֆինանսավորման տեսքով ներդնում է համայնքը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 6/6/1 գործառնական դասակարգման (5113) «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» և «Նախագծահետազոտական ծախսեր» (5134) տնտեսագիտական դասակարգման հոդվածներից,

2) ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդ օրվանից:

| Կողմ -18 | Դեմ -0 | Ձեռնպահ -10 |
|---|---|---|
| Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ | | Լ. ԱՆԱՆՅԱՆ |
| Լ. ԱՆԱՆՅԱՆ | | Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ | | Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ |

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՌՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 03
ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 դեկտեմբերի 2025 թվականի N 139-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 11 ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով և հինգ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների գրությունները՝ ուղղված համայնքի ղեկավարին (Գյումրու համայնքապետարան մուտքագրված՝ 2025 հոկտեմբերի 01-ին N 15023, հոկտեմբերի 10-ին N15661, հոկտեմբերի 13-ինN 15768, հոկտեմբերի 24-ին N16452, հոկտեմբերի 23-ին N16361 և N 16409, հոկտեմբերի 28-ին N 16585 հոկտեմբերի 29-ին N 16702, նոյեմբերի 05-ին N 17101, նոյեմբերի 10-ին N 17249, նոյեմբերի 18-ին N 17782 և նոյեմբերի 26-ին N18276 թվագրություններով)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին ընթացիկ վերանորոգման, գույքի ձեռքբերման, լուսավորության համար լեդ լամպերի և ջեռուցման համար նյութերի գնման և ներկայացումներ բեմադրական ծախսերի կատարման նպատակով, որպես նվիրատվություն հատկացնել 6 503 550 (վեց միլիոն հինգ հարյուր երեք հազար հինգ հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման1-ին կետում նշված գումարների հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի 8/1/1 և 8/2/3 գործառական(4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով՝ համաձայն հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպությունների տնօրեններին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Կողմ -27** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 03
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 դեկտեմբերի 2025 թվականի N 140-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 3 (ԵՐԵՔ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքի «Լապտերիկ-մսուր մանկապարտեզ», «Լիլիթ-մսուր մանկապարտեզ» և «Գոհար-մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպերպությունների (այսուհետ՝ կազմակերպություններ) տնօրենների գրությունները՝ ուղղված Գյումրի համայնքի ղեկավարին (Գյումրու համայնքապետարան համապատասխանաբար մուտքագրված՝ 2025 թվականի հոկտեմբերի 31-ին N16829, N16852, N16816 թվագրություններով)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Կազմակերպություններին՝ որպես նվիրատվություն հատկացնել 5 428 471 (հինգ միլիոն չորս հարյուր քսանութ հազար չորս հարյուր յոթանասունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ՝ գազասպառման համակարգերի փոփոխության նպատակով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 9/6/1 գործառական (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպությունների տնօրեններին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -27 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 03
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 դեկտեմբերի 2025 թվականի N 141-Ա

## «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությունն իրականացնում է «Տաք ձմեռ» ծրագիրը, որը նպաստում է տարեցների առողջության պահպանմանը՝ ձմռան ամիսներին հոգալով նրանց բնակարանների ջեռուցման խնդիրները: Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) գործադիր տնօրեն Գագիկ Տարասյանի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված գրությունները (Գյումրու համայնքաապետարանում համապատասխանաբար մուտքագրված՝ 2025 թվականի հոկտեմբերի 14-ին և 29ին NN 15894,16711 թվագրություններով)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Կազմակերպությանը որպես նվիրատվություն հատկացնել 1 038 000 (մեկ միլիոն երեսունութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 2025-2026 թվականների ձմռան ընթացքում համայնքի թվով 346 (երեք հարյուր քառասունվեց) կարիքավոր ծերերի ջեռուցման կարիքները հոգալու նպատակով:

2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպության գործադիր տնօրեն Գագիկ Տարասյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Կողմ -27** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

**Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**
**Լ. ԱՆԱՆՅԱՆ**

Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 03
ք. Գյումրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 դեկտեմբերի 2025 թվականի N 142-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ‹‹ՇԻՐԱԿ›› ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅԱՆԸ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ‹‹Շիրակ›› համատիրության նախագահին (այսուհետ՝ նախագահ) դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ իրենց համատիրության կողմից սպասարկվող Իսահակյան փողոցի 9-րդ շենքի տանիքի վերանորոգման համար սուբսիդիա ստանալու խնդրանքով: Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով ‹‹Տեղական ինքնակառավարման մասին›› օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությունով և հիմք ընդունելով նախագահ Թ. Ասատրյանի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված գրությունը (Գյումրու համայնքապետարանում մուտքագրված՝ 2025 թվականի հոկտեմբերի 31-ին N16842 թվագրությունով)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ‹‹Շիրակ›› համատիրությանը հատկացնել սուբսիդիա՝ 350 000 (երեք հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ իրենց կողմից սպասարկվող Իսահակյան փողոցի 9-րդ շենքի տանիքի վերանորոգման աշխատանքներն ավարտին հասցնելու համար:

2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 6/6/1 գործառական դասակարգման (4521) «Սուբսիդիաներ ոչ պետական, ոչ ֆինանսական կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից Հայաստանի Հանրապետության դրամ՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ -25** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 03
ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 դեկտեմբերի 2025 թվականի N 143-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 9-րդ կետի դրույթներով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի կողմից իրականացվելիք ամանորյա միջոցառումների կազմակերպման և անցկացման համար հատկացնել 9 000 000 (ինը միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ - գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի 9 000 000 (ինը միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/6/1 գործառական դասակարգման (4861) «Այլ ծախսեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ -27** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 03
ք. Գյումրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

03 դեկտեմբերի 2025 թվականի N 144-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ՏԵՂԱԴՐՎՈՂ ԱՄԱՆՈՐՅԱ ՏՈՆԱԾԱՌԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ, ՄՈՆՏԱԺՄԱՆ ԵՎ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ, ՆՈՐ ԶԱՐԴԱՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՈՒ ՀԻՆ ԶԱՐԴԱՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վարդանանց հրապարակում տեղադրվող ամանորյա տոնածառը վնասված է և կարիք կա վերանորոգման, ինչպես նաև կարիք կա հին զարդարանքների վերանորոգման և նոր զարդարանքների ձեռք բերման: Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 42-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժ/պ Անդրանիկ Չադրյանի՝ Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված 2025 թվականի հոկտեմբերի 30-ի զեկուցագիրը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հատկացնել 24 000 000 (քսանչորս միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ, որից 2 000 000 (երկու միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամը հատկացվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վարդանանց հրապարակում տեղադրվող տոնածառի վերանորոգման, հրապարակում մոնտաժման և ապամոնտաժման համար, 18 000 000(տասնութ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամը նոր դեկորների և լույսերի ձեռքբերման, ձևավորման և տեղադրման համար, 4 000 000 (չորս միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամը Գյումրի համայնքին պատկանող հին դեկորների և լույսերի վերանորոգման և տեղադրման համար:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 6/6/1 գործառական դասակարգման (5129) «Այլ մեքենաներ և սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից 18 000 000 (տասնութ

միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ և (4239) «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ 6 000 000 (վեց միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| **Կողմ -18** | **Դեմ -8** | **Ձեռնպահ -0** |
|---|---|---|
| Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ | Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ | |
| Լ. ԱՆԱՆՅԱՆ | Լ. ԱՆԱՆՅԱՆ | |
| Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ | Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | |
| Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ | |
| Կ. ԼԱԼԱՁԱՐՅԱՆ | Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ | |
| Ս. ԷԼԲԱԿՅԱՆ | Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ | |
| Ս. ՄԵԼԻՔՅԱՆ | Վ. ԴԱՎԹՅԱՆ | |
| Ս. ԱԴԱՄՅԱՆ | Լ. ՆԱԶԱՐՅԱՆ | |
| Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ | | |
| Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ | | |
| Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ | | |
| Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ | | |
| Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ | | |
| Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ | | |
| Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ | | |
| Ս. ՄՈՍՈՅԱՆ | | |
| Կ. ՍԻՄՈՆՅԱՆ | | |
| Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 03
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ու Մ
03 դեկտեմբերի 2025 թվականի N 145-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 118-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու հոկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի թվով 5 (հինգ) համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին նվիրատվություն հատկացնելու մասին» N 118-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
1) որոշման 1-ին կետում «1 928 250 (մեկ միլիոն ինը հարյուր քսանութ հազար երկու հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ» թիվը և բառերը փոխարինել «2 727 450 (երկու միլիոն յոթ հարյուր քսանյոթ հազար չորս հարյուր հիսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ» թվով և բառերով,
2) հավելվածի «ընդամենը» տողի «1 928 250» թիվը փոխարինել «2 727 450» թվով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

**Կողմ -25** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 03
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 դեկտեմբերի 2025 թվականի N 146-Ա

## ՍԱՅԱԹ ՇՄԱՎՈՆԻ ԹԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սայաթ Շմավոնի Թաթևոսյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող «Կիա Օպտիմա 2.4» («KIA OPTIMA 2.4») մակնիշի, 35 XC 253 հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) գույքահարկի 2019 թվականի նոյեմբեր ամսից մինչև 2025 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով:

Տրանսպորտային միջոցը, որը սեփականության իրավունքով պատկանում է Սայաթ Շմավոնի Թաթևոսյանին, 2019 թվականի հոկտեմբերի 09-ին վթարի է ենթարկվել՝ բախվելով գնացքին, որի պատճառով դարձել է հետագա շահագործման համար ոչ պիտանի և ենթակա է հաշվառումից հանման խոտանման պատճառով (հիմք՝ վարչական գործ թիվ ՎԴ5/0280/05/22, Վերաքննիչ վարչական դատարանի 2024 թվականի հունիսի 21-ի որոշումը, թվով քանչորս լուսանկարներ դեպքի վայրից):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Սայաթ Շմավոնի Թաթևոսյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի Լազոյի փողոց տուն 12 հասցեում, անձնագիր N AT0528536, տրված՝ 2020 թվականի հուլիսի 24-ին, ոստիկանության 064-ի կողմից, սոցիալական ապահովության քարտ՝ 3901940170) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2025թվականի հոկտեմբերի 29-ին N 16682 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել արտոնություն Սայաթ Շմավոնի Թաթևոսյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի գույքահարկի 2019 թվականի նոյեմբեր ամսից մինչև 2025 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի

մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ՝ ազատելով գույքահարկի ընդամենը 430.007 (չորս հարյուր երեսուն հազար յոթ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից մայր գումարը 2019 թվականի նոյեմբեր ամսից մինչև 2020 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար կազմում է 64.167 (վաթսունչորս հազար հարյուր վաթսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 19.192 (տասնինը հազար հարյուր իննսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ 2021 թվականի հունվար ամսից մինչև 2025 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար մայր գումարը կազմում է 275.000 (երկու հարյուր յոթանասունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 71.648 (յոթանասունմեկ հազար վեց հարյուր քառասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը մայր գումարը կազմում է 339.167 (երեք հարյուր երեսունինը հազար հարյուր վաթսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 90.840 (իննսուն հազար ութ հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է Սայաթ Շմավոնի Թաթևոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Կողմ -25** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 03
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

03 դեկտեմբերի 2025 թվականի N 147-Ա

**ՎԼԱԴԻՄԻՐ ԼՅՈՎԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Վլադիմիր Լյովայի Մխիթարյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող «Օպել Զաֆիրա 1.8L» (OPEL ZAFIRA 1.8L) մակնիշի, 36 AQ 827 հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) գույքահարկի 2023 թվականի հունվար ամսից մինչև 2025 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով:

Տրանսպորտային միջոցը, որը սեփականության իրավունքով պատկանում է Վլադիմիր Լյովայի Մխիթարյանին, 2022 թվականի հոկտեմբերի 31-ին վթարի է ենթարկվել, որի պատճառով դարձել է հետագա շահագործման համար ոչ պիտանի, մինչ օրս գտնվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության գլխավոր վարչության Անիի բաժնում, ենթակա է հաշվառումից հանման խոտանման պատճառով, իսկ մայրը՝ Հայկանուշ Լալայի Մխիթարյանը վթարի հետևանքով մահացել է (հիմք՝ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2025 թվականի հունիսի 06-ի դատավճռի կրկնօրինակը, թվով հինգ լուսանկարներ դեպքի վայրից:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Վլադիմիր Լյովայի Մխիթարյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի Կուրղինյան փողոց 59 տուն հասցեում, նույնականացման քարտ 011948833, տրված՝ 2020 թվականի օգոստոսի 21-ին, ոստիկանության 004-ի կողմից, սոցիալական ապահովության քարտ՝ 1803910623) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2025թվականի հոկտեմբերի 23-ին N 16407 թվագրմամբ)՝ **Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել արտոնություն Վլադիմիր Լյովայի Մխիթարյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի գույքահարկի 2023 թվականի հունվար ամսից մինչև 2025 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ՝ ազատելով գույքահարկի ընդամենը 69.655 (վաթսունինը հազար վեց հարյուր հիսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից մայր գումարը կազմում է 56.200 (հիսունվեց հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 13.455 (տասներեք հազար չորս հարյուր հիսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վլադիմիր Լյովայի Մխիթարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Կողմ -25** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**
**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 03
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

03 դեկտեմբերի 2025 թվականի N 148-Ա

## ԹՎՈՎ ՏԱՍՆՀԻՆԳ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով որոշման հավելվածում նշված դիմումատուների՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել արտոնություն թվով տասնհինգ քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցների գույքահարկի տույժերի վճարումների նկատմամբ, ազատելով գույքահարկի տույժերի վճարումից՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ -25** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

**Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**
**Լ. ԱՆԱՆՅԱՆ**
**Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ**
**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ**
**Ս. ԷԼԲԱԿՅԱՆ**
**Ս. ՄԵԼԻՔՅԱՆ**
**Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ**
**Լ. ԱՆԱՆՅԱՆ**
**Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ**
**Լ. ՆԱԶԱՐՅԱՆ**
**Ս. ԱԴԱՄՅԱՆ**
**Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**
**Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ**
**Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**
**Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ**

Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Կ.ՄԱԼԽԱՍՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 03
ք. Գյումրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

03 դեկտեմբերի 2025 թվականի N 149-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով «ՖՈՒԼ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրամադրված գույքերի գնահատման հաշվետվությունները ՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքերը օտարել աճուրդով և սահմանել աճուրդի մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Կողմ -22 | Դեմ -0 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|

**Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**
**Լ. ԱՆԱՆՅԱՆ**
**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ**
**Ս. ԷԼԲԱԿՅԱՆ**
**Ս. ՄԵԼԻՔՅԱՆ**
**Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ**
**Լ. ԱՆԱՆՅԱՆ**
**Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ**
**Վ. ԴԱՎԹՅԱՆ**
**Լ. ՆԱԶԱՐՅԱՆ**
**Ս. ԱԴԱՄՅԱՆ**
**Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**
**Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ**
**Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**
**Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ**
**Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ**

Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 03
ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

03 դեկտեմբերի 2025 թվականի N 150-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 33-րդ, 34-րդ, և 35-րդ կետերի պահանջները և որոշման հավելվածում նշված դիմումատուների Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված և դրանց նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը գրանցված շենք-շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասերը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ շինությունները կառուցողներին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նախաբանում նշված դիմումատուներին պատշաճ կերպով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Կողմ -22** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ

Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 03
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 դեկտեմբերի 2025 թվականի N 151-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ մասով, 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով, 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, նկատի ունենալով, որ հավելվածում նշված հողամասերը որպես առանձին գույքային միավոր հնարավոր չեն օտարել աճուրդով, հիմք ընդունելով քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից տրված եզրակացությունները և սույն որոշման հավելվածներում նշված դիմումատուների կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ հողամասերը տվյալ հողամասերի կադաստրային արժեքով՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերի պահպանման ու սպասարկման համար փաստացի զբաղեցրած Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին պատկանող հողամասերն ուղղակի վաճառքի միջոցով օտարել անշարժ գույքերի սեփականատերերին՝ տվյալ հողամասերի կադաստրային արժեքով՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում NN 1, 2 հավելվածներում նշված դիմումատուներին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Կողմ -22** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ

Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 03
ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

03 դեկտեմբերի 2025 թվականի N 152-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 69-րդ հոդվածի 1-ին մասով, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին» N 70-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետի 6-րդ սյունակի «510 000» թիվը փոխարինել «306 000» թվով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին» N 126-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 10-րդ կետի 6-րդ սյունակի «8 590 000» թիվը» փոխարինել «5 154 000» թվով:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին» N 137-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 12-րդ կետի 6-րդ սյունակի «8 160 000» թիվը» փոխարինել «4 896 000» թվով:

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին» N 34-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 29-րդ կետի 6-րդ սյունակի «2 250 000» թիվը» փոխարինել «1 350 000» թվով:

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին» N 118-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետի 6-րդ սյունակի «10 200 000» թիվը» փոխարինել «6 120 000» թվով:

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին» N 205-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 13-րդ կետի 6-րդ սյունակի «10 260 000» թիվը» փոխարինել «6 156 000» թվով:

7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին» N 179-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետի 6-րդ սյունակի «10 020 000» թիվը» փոխարինել «6 012 000» թվով:

8. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ -22** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 03
ք. Գյումրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
03 դեկտեմբերի 2025 թվականի N 153-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N 141-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, հիմք ընդունելով «ՖՈՒԼ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գնահատման հաշվետվությունը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության Շրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գյումրի քաղաքի Արագած 1-ին թաղամաս N 2/1 հասցեի անշարժ գույքն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գին սահմանելու մասին» N 141-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման 2-րդ կետի «100000000 (մեկ հարյուր միլիոն)» թիվը և բառերը փոխարինել «94973000 (ինսունչորս միլիոն ինը հարյուր յոթանասուներեք հազար)» թվով և բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

**Կողմ -22** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱՋԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 03
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 դեկտեմբերի 2025 թվականի N 154-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 101-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 69-րդ հոդվածի 1-ին մասով, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ սահմանելու մասին» N 101-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| **Կողմ -22** | **Դեմ -0** | **Ձեռնպահ -0** |
|---|---|---|
| Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ | | |
| Լ. ԱՆԱՆՅԱՆ | | |
| Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | | |
| Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ | | |
| Ս. ԷԼԲԱԿՅԱՆ | | |
| Ս. ՄԵԼԻՔՅԱՆ | | |
| Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ | | |
| Լ. ԱՆԱՆՅԱՆ | | |
| Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | | |
| Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ | | |
| Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ | | |
| Վ. ԴԱՎԹՅԱՆ | | |
| Լ. ՆԱԶԱՐՅԱՆ | | |
| Ս. ԱԴԱՄՅԱՆ | | |
| Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ | | |
| Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ | | |
| Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ | | |
| Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ | | |

Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՌՍՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 03
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 դեկտեմբերի 2025 թվականի N 155-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-դ կետերով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին կից հասարակական կարգով գործող «Քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի» խորհրդակցական մարմին ձևավորելու, խորհրդակցական մարմնի կազմը հաստատելու մասին» N 16-Ա որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 3-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

   1) 1-ին ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.
   «1) Կարեն Մխիթարյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար»,

   2) հանել 8-րդ ենթակետը,

   3) 10-րդ ենթակետում ««Արտ-նախագիծ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն» բառերը փոխարինել «ճարտարագետ» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման 2-րդ կետով հաստատված կազմում ընդգրկված անդամներին պատշաճ իրազեկելու օրվանից:

**Կողմ -22** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

**Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**
**Լ. ԱՆԱՆՅԱՆ**
**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ**
**Ս. ԷԼԲԱԿՅԱՆ**
**Ս. ՄԵԼԻՔՅԱՆ**
**Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ**
**Լ. ԱՆԱՆՅԱՆ**
**Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 03
ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

03 դեկտեմբերի 2025 թվականի N 156-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N 26-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, ինքնակամ կառուցված շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասերն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 26-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) որոշման հավելվածի «հողամասի համար վճարվելիք գումարի չափը» սյունակի 12-րդ տողում «749010» թիվը փոխարինել «322738» թվով,

2) որոշման հավելվածի «գույքի համար վճարվելիք գումարի չափը» սյունակի 12-րդ տողում «669971» թիվը փոխարինել «578442» թվով,

3) որոշման հավելվածի «հողի տարածագնահատման գոտին» սյունակի 12-րդ տողում «11» թվից հետո լրացնել «(հին)» բառը :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ -22** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ

Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 03
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 դեկտեմբերի 2025 թվականի N 157-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 171-Ն որոշման 1-ին կետով ընդունված կանոնակարգի 96-րդ կետով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական չորրորդ նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի դեկտեմբերի 19-ը՝ ժամը՝ 12:00:

**Կողմ -22** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

**Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**
**Լ. ԱՆԱՆՅԱՆ**
**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ**
**Ս. ԷԼԲԱԿՅԱՆ**
**Ս. ՄԵԼԻՔՅԱՆ**
**Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ**
**Լ. ԱՆԱՆՅԱՆ**
**Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ**
**Վ. ԴԱՎԹՅԱՆ**
**Լ. ՆԱԶԱՐՅԱՆ**
**Ս. ԱԴԱՄՅԱՆ**
**Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**
**Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ**
**Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**
**Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ**
**Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ**

Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 03
ք. Գյումրի